**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՈԿՀ-2020 ԲՄԿ**

ք. Երևան «10» ---------01------- 2020թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու մի կողմից, և <<ՀՀ ոստիկանության կրթահամալիր>> ՊՈԱԿ-ը, ի դեմս պետ, ոստիկանության գեներալ մայոր Ս.Բաբայանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1.Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի 09.04.01.01..«Բարձրագույն մասնագիտական կրթություն» ծրագրի շրջանակներում <<ՀՀ ոստիկանության կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի միջին տարեկան թվով 170 սովորողի համար հաշվարկված, ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները:

**2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

2.1. . Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է 920679500 (ինը հարյուր քսան միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու մջջոցով սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածին համապատասխան:

**3.ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

**4.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ ոստիկանություն | <<ՀՀ ոստիկանության կրթահամալիր>> ՊՈԱԿ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| ՀՎՀՀ 01533334 | ՀՎՀՀ 01806293 |
| Հ/Հ 900011159051 | Հ/Հ 900018005018 |
| ՀՀ ոստիկանության պետի տեղակալ | |
| ------------------------ Վ.Մովսիսյան | Պետ ------------------------ Ս.Բաբայան |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1

«10» 01 2020 թ. կնքված

N ՀՀ ՈԿՀ-2020 ԲՄԿ պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ հազ.դրամ/

| NN | Ծառայության անվանումը | Ֆինանսավորումը 2020թ. ընթացքում՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեից /աճողական կարգով/ | | | | | | | | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | ոստիկանության ծառայողների բարձրագույն մասնագիտական կրթություն | 76723,3 | 153446,6 | 230169,9 | 306893,2 | 383616,5 | 460339,8 | 537063,1 | 613786,3 | 690509,6 | 767232,9 | 843956,2 | 920679,5 | 920679,5 |

**Պատվիրատու**

ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 01533334
Հ/Հ 900011159051

------------------------- Վ.Մովսիսյան

/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/

Կ.Տ

**Կատարող**

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ
ք.Երևան, Իսակովի 29
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005018
ՀՎՀՀ 01806293

------------------------- Մ.Բաբայան

/«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի պետ/

Կ.Տ